



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 14 » _____ 12 _____ 2020թ.

№ 08/ԼԱ/-535

Դեկտեմբերի 7-13-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Դեկտեմբերի 7-ին, 9-10-ին՝ շրջանների զգալի մասում, 8-ին առանձին շրջաններում, դիտվել են տեղումներ՝ լեռնային շրջաններում ձյուն, նախալեռնային և հովտային շրջաններում՝ թաց ձյուն: 11-13-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Տեղումների առավելագույն գումարային քանակը կազմել է Աշտարակում՝ 22մմ, լեռնային շրջաններում 10-15մմ (Ամասիայում՝ 18մմ), Լոռիում, Տավուշում 12-13մմ, Արարատյան դաշտում, Սյունիքի նախալեռնային շրջաններում մինչև 9մմ (Աերոլոգիական կայանում, Գորիսում՝ 12մմ):

Օդի օրական միջին ջերմաստիճանը դեկտեմբերի 7-12-ին՝ Լոռիում, Տավուշում, Սյունիքի հովտային շրջաններում նորմայից ցածր է եղել 2-5 աստիճանով, Արարատյան դաշտում, Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց ձորի և Կոտայքի լեռներում՝ բարձր 1-3 աստիճանով: Դեկտեմբերի 13-ին՝ Լոռիում, Տավուշում նորմայից ցածր է եղել 1-2 աստիճանով, մնացած շրջաններում բարձր՝ 2-4 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է դեկտեմբերի 13-ին՝ Լոռիում, Տավուշում, Սյունիքի հովտային շրջաններում՝ +8...+12°C, Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց ձորի և Կոտայքի լեռներում, Կոտայքի նախալեռներում՝ +3...+8°C, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում, Սյունիքի նախալեռներում՝ +7...+9°C (Արենիում՝ +10°C):

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է 11-13-ին՝ Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց ձորի և Կոտայքի լեռներում, Սյունիքի նախալեռներում՝ -4...-9°C (Մասրիկում՝ -13°C, Գավառում՝ -14°C, Արագած բարձր լեռնայինում՝ -15°C), Լոռիում՝ -3...-7°C, Տավուշում՝ -4...+1°C, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում՝ -1...+2°C, Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտում՝ -2...+3°C:

Ձյան ծածկի բարձրությունը Ստեփանավանում, Տաշիրում, Ջերմուկում և Գորիսում կազմում է 4-6սմ, Անանուն և Պուշկինի լ-ցքներում, Ապարան լճային կայանում՝ 14-18սմ, լեռնային շրջաններում՝ 3-10սմ (Ամբերդում՝ 31սմ, Արագած բարձր լեռնայինում՝ 52սմ): Արարատյան դաշտում ձյան ծածկը բացակայում է:

Շաբաթվա ընթացքում դիտվել է 200-500մ տեսանելիությամբ մառախուղ (դեկտեմբերի 9-ին՝ Արմավիրում, 10-ին՝ Արթիկում՝ 10մ):

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1 սմ-ով և կազմել՝ 1900.52մ (13.12.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 7 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան